ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

096-Ե-082

07/12/2017

«Հետք» պարբերականի լրագրող
տիկին Սեդա Ղուկասյանին

Հարգելի՛ տիկին Ղուկասյան,

ԱԺ վեցերորդ գումարման առաջին և երկորդ նստաշրջանների ընթացքում քաղաքացիների ընդունելություն իմ կողմից կազմակերպվել է ՀՀ Ազգային Ժողովում (հ. 136 սենյակ) և «Լուսավոր Հայաստան» կուսակցության գրասենյակում (հասցեն՝ Բաղրամյան 1): Առաջին նստաշրջան ընթացում դիմել 31 քաղաքացի, երկրորդ նստաշրջանի ընթացքում՝ 78 քաղաքացի, բացի այդ բավականի մեծ թվով դիմումներ են ուղարկվել սոցիալական ցանցերի և էլեկտրոնային փոստի միջոցով: Հիմնական խնդիրները, որով դիմել են քաղաքացիները, վերաբերում էին սոցիալական, պետական կառավարման թերությունների, օրենքներում առկա հակասություններ և դրանց հակասական կամ ոչ լիարժեք մեկնաբանման հետ, տրանսպորտային համակարգի խնդիրներին, բավականին մեծ թիվ են կազմել բանկային համակարգի հետ խնդիրներ ունեցող քաղաքացիների դիմումները: Այն խնդիրները, որոնք դուրս են գտնվել պատգամավորի գործունեության շրջանակներից, մենք հասցեավորել ենք կամ համապատասխան պետական, ՏԻՄ կառույցներին, կամ տրամադրել ենք անվճար իրավաբանական խորհրդատվություն: Խնդիրների մեծ մասը կրել են անձնական բնույթ, որի կարգավորման նպատակով դիմել ենք ոլորտի համար պատասխանատու պետական լիազոր մարմիններին: Ընդհանուր գրավոր նամակների քանակը 01/06-01/12/17-ն ընկած ժամանակահատվածում՝ 28, էլեկտրոնային փոստի և ցանցերի միջոցով ՝ 53, բանավոր դիմումներ՝ մոտ 100, դրանցից իրավաբանական խորհրդատվություն և

աջակցություն են ստացել 130-ից ավելին, մնացածների դեպքում կամ բավարարվել են մասնակիորեն, կամ մերժվել են:

Գրավոր դիմումներ կամ այլ անձնական տեղեկատվություն դիմողների վերաբերյալ չեմ կարող տրամադրել՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն, քանի որ դիմումատուների կողմից չունեմ նման թույլտվություն, այն է՝ տրամադրել դիմումի վերաբերյալ կամ անձնական բնույթի տեղեկատվություն այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, բացառությամբ պետական լիազոր մարմինների:

Հարգանքով՝

Գևորգ Գորգիսյան

«ԵԼՔ» խմբակցության քարտուղար